

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԸ ԵՎ «ՍԱՍՆԱ ԾՈՒՐ» ՀԵՐՈՍԱՎԵՊԸ
(Գիտնականի ծննդյան 125-ամյակի առթիվ)

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Սասնա ծռեր» հերոսավեպի հայտնագործումը շրջադարձային նշանակություն ունեցավ հայ ժողովրդական մշակույթի պատմության համար: Հայտնագործողն էր արևմտահայ մտավորականության փայլուն ներկայացուցիչ Գարեգին վարդապետ Սրվանձությանցը, հայտնագործման թվականը՝ 1873, տեղը՝ Մուշ գավառի Առնիստ գյուղը, վիպասացը՝ Կրպո անունով մշեցի մի երեցիփոխ:

Երբ վեպի այդ անդրանիկ պատումը 1874-ին տպագրվեց Կ. Պոլսում, Սրվանձությանցի մտքով անգամ չէր անցնում, որ իր «Գրոց ու բրոց ու Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» անունով փոքրիկ գրքույկը կարող էր հեղաշրջում առաջ բերել ազգի հոգևոր կյանքում: Սրվանձությանցն, անշուշտ, գիտակցում էր իր կատարած գործի արժեքը, զգում հայտնաբերած հերոսավեպի պատմամշակութային խորքն ու իմաստը, բայց թերահավատ էր դրա հասարակական ընդունելության նկատմամբ: Նա վեպի պատումին կցած առաջաբանում գրում էր. «Այս գործիս հրատարակությունը հասկացողին համար արժեք կունենա. բայց կարծեմ արհամարհողներ ավելի պիտի լինին և աղպանողներ... Ասոնք չհասկցողներն են: Բայց մեր փուլից չէ: Քաջալերված կը համարիմ զիս, եթե համարանքով քսան հոգի ևեթ լինին հավանող այս գործուն»¹:

Սրվանձությանցի կատածն իզուր էր. նրա գործի արժեքը չհասկացողներ չգտնվեցին, ընդհակառակը, հասկացողներն ու գնահատողները այնքան շատ էին և այնքան լուրջ մտավորականներ, որոնց կարծիքն ուներ համազգային հեղինակություն: Թե՛ պարբերական մամուլում և թե՛ Սրվանձությանցին ուղղած անձնական նամակներում նրանք իրենց խոր հիացմունքն ու ոգևորությունն էին արտահայտում այդ գյուտի և նրա համազգային մեծ նշանակության մասին: Պատճառն, անշուշտ «Սասնա ծռերի» և առհասարակ «Գրոց ու բրոցի» ազգային խորքի ու բնույթի մեջ էր: Եվ ոչ միայն այդ. հայ կյանքը XIX դ. վերջին քառորդում ապրում էր ազգային ինքնագիտակցության արթնացման խոր ու լայնահուն վերընթացը, ազգային արժեքների գնահատման մի այնպիսի ժամանակաշրջան, երբ ազգային հերոսավեպի հայտնագործումը կարող էր միայն բուռն խմորումների և նոր վերելքների առիթ ծառայել:

Բացի այդ, ժամանակի թե՛ հայ և թե՛ մանավանդ օտար մտավորականների մեջ արմատացել էր այն հոռի կարծիքը, որ հայ ազգը, դարեր շարունակ զրկված լինելով պետականությունից, ենթակա՝ օտարների լեզվին ու մշակույթին, վաղուց ի վեր զրկվել է նաև սեփական լեզվով ու նկարագրով ազգային, այն էլ հերոսական վիպասանություն ունենալու հնարավորությունից: «Սասնա ծռերի» գյուտը գալիս էր ընդմիջում հերքելու այդ տեսակետը: Ահա այս պարագաները նկատի ունենալով, միանգամայն պարզ ու հասկանալի է դառնում ոգևորության այն բուռն ալիքը, որ առաջ բերեց Սրվանձությանցի հայտնագործությունը հայ ժողովրդի բոլոր հատվածներում՝ թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում միաժամանակ: Հասարակական անսպասելի ջերմ ու հուզիչ ընդունելությունից առաջին ոգեշնչվողը եղավ ինքը՝ Սրվանձությանցը, որը

¹ Գ. Սրվանձությանց, Երկեր, հ. Ա, Երևան, 1978, էջ 86:

սկսեց իրար հետևից լույս աշխարհ հանել արևմտահայ տարբեր գավառներից իր իսկ հավաքած բանահյուսական ու ազգագրական գողտրիկ նմուշների ընտրանին՝ «Մանանան», «Համով-հոտովը», «Թորոս աղբարը», մեկը մյուսից ճաշակով, ազնիվ ու գունագեղ:

Սրվանձտյանցի գործի առաջ բերած բուռն ոգևորությունը փոխարկվում է գործնական մի մեծ շարժման: Նրա նմանությունը և հետևությունը արևելահայ ու արևմտահայ հատվածներում, մտավորականության տարբեր ներկայացուցիչներ սկսում են բանահյուսական և ազգագրական նյութերի զանգվածային գրառումներ ու հրապարակումներ կատարել: Մեկը մյուսին հաջորդում են բանահավաքների նոր անուններ, բանահյուսական-ազգագրական նորանոր ժողովածուներ: Սրվանձտյանցը «Սասնա ծռեր» հերոսավեպի հայտնաբերումով, իր հրատարակած գրքերով դառնում է հայ ժողովրդագիտական մեծ շարժման հիմնադիրն ու առաջամարտիկը:

Սրվանձտյանցի առաջ բերած ժողովրդագիտական, մանավանդ հերոսավեպի նոր պատումների հայտնաբերման և հետազոտման ուղղությամբ ընթացող շարժման անդրանիկ սերնդի ներկայացուցիչներից մեկն է դառնում Մանուկ Արեղյանը: 1886 թ. էջմիածնի Գեորգյան ճեմարանում պաշտոնավարելիս, ճեմարանի նորավարտ սան Մ. Արեղյանը նույն ճեմարանի դռնապան մոկացի պանդուխտ Նահապետից, որին աշակերտները Նախո քեռի էին կոչում, գրի է առնում «Սասնա ծռեր» հերոսավեպի մի նոր պատում, որը Սրվանձտյանցի գրառածից հետո երկրորդ նոր տարբերակն էր: Այն 1889-ին տպագրվում է Շուշիում, առանձին գրքով՝ «Դավիթ և Մհեր» խորագրով:

Հերոսավեպի այս նոր պատումի հայտնադործումն ուներ պատմական կարևոր նշանակություն մի քանի առումներով: Նախ, այն գալիս էր ապացուցելու, որ հայ ժողովրդական նորահայտ հերոսավեպը ոչ թե պատահական երևույթ էր կամ սոսկ տեղական ստեղծագործություն, միայն Տարոնին հատուկ, այլ մի համազգային վեպ, որ վաղուց դուրս է եկել իր բնօրրանից՝ Սասնո և Մշո սահմաններից, և դարձել նաև Հայաստանի այլ գավառների սեփականություն: Ապա, Արեղյանի գրառած պատումն իր վիպական ոճով, կառուցվածքով, չափածո երգային հատվածների առատությամբ զգալիորեն տարբերվում էր Գ. Սրվանձտյանցի տարբերակից և օժտված էր գեղարվեստական առավել բարձր հատկանիշներով: Եվ, ի վերջո, ինչպես հետագայում պարզվեց, հենց սկզբից մի զարմանալի պատահականությամբ թե՛ Սրվանձտյանցի և թե՛ Արեղյանի կողմից գրառվել էին հերոսավեպի երկու տիպաբանական մեծ խմբերի ներկայացուցչական պատումներ, որոնք իրենց ավանդման տեղավայրերի, միաժամանակ և ներքին տիպաբանական հատկանիշների պատճառով կոչվեցին Մշո և Մոկաց տարբերակներ:

Արեղյանի գրառած պատումը լույս տեսնելուն պես իր վրա գամեց ժամանակի անվանի մտավորականների (Լեո, Լ. Սարգսյան, Ն. Մառ) ուշադրությունը, արժանանալով բարձր գնահատանքի և արժեքավորման:

Արեղյանն իր տպագրած պատումի սեղմ առաջարկում զարգացնում էր հերոսավեպի ընդարձակ ու բազմաճյուղ, ամբողջապես չափածո լինելու ուրույն տեսակետը: Նա, ելնելով վեպի ուրթմական-տաղաչափական հատկանիշներից, տողատում է այն, վեպը համարում 6—13 վանկանի ազատ ոտանավորով հորինված և, «Սասնա ծռերի» տաղաչափությունը համեմատելով Մ. Խորենացու ավանդած հին վիպական բանահյուսության չափածո հատվածների հետ, մատնացույց է անում երկուսի էլ տաղաչափական նույնությունը: Դրանով նա, առայժմ սոսկ տաղաչափական տեսակետից, սահմանում է հայոց հին ու նոր վեպերի ձևական սերտ հարաբերությունը:

Նույն՝ 1889 թ., Սրվանձտյանցի և իր գրառած պատումի հիման վրա Մ. Արեղյանը «Մուրճ» ամսագրում սկսում է տպագրել «Ազգային վեպ» խորագրով մենագրությունը²: Սա հայ բանասիրության մեջ «Սասնա ծռեր» հերոսավե-

² Տե՛ս Մուրճ, 1889, № 10—11, 1890, № 1—2:

պին նվիրված առաջին լուրջ ու ամբողջական հետազոտությունն էր, որով Աբեղյանը հիմք էր դնում մեր հերոսավեպի գիտական ուսմունքին: Ծթե Վեպի թեմի և Մհերով Աբեղյանը Սրվանձտյանցից հետո վաստակում էր հայ ժողովրդական վեպի հայտնադրածման երկրորդության պատիվը, ապա «Ազգային վեպ» ուսումնասիրությամբ՝ վեպի իսկական հետազոտողի առաջնությունը:

«Ազգագրիկական» Աբեղյանը, հետևելով ժամանակի ուսու բանագիտության, մասնավորապես Ֆ. Բուսլանի՝ Գրիմի եղբայրներից որդեգրած առասպելաբանական մեկնարանությունների տեսությանը և Օ. Միլլերի՝ ռուս ժողովրդական վեպի հետազոտման հիմնադրություններին, ուսումնասիրության առարկա է դարձնում հայկական հերոսավեպի երկու արմատական խնդիր՝ պատմական ատաղձը և դյուցազնական առասպելաբանական հիմքերը:

Աբեղյանն իր ուսումնասիրությունը կատարում է կոնկրետ պատմական ելակետից, այսինքն՝ վեպի բուն հայրենիքը հանդիսացող Սասնա պատմա-աշխարհագրական միջավայրի, այնտեղ կատարված պատմական որոշակի անցուղիների և վիպական միջավայրի ու վերադարձությունների համեմատական քննությունից: Նա գտնում է, որ ժողովրդական վեպը աշխարհագրական որոշակի միջավայրում կատարված պատմական որոշակի իրադարձությունների գեղարվեստական արտացոլման արդյունք է, և միայն պատմաաշխարհագրական այն միջավայրը կարող է հերոսական վիպասանության առարկա դառնալ, որի սահմաններում կատարվել են վիպասանության արժանի սրբաբարձություններ և հերոսական արարքներ: Իսկ այդպիսին մեր պատմության մեջ Սասունն է ու Տորոսի լեռները, որի բնակիչները հերոսական կռիվներ են մղել թաթարների ու թուրքերի դեմ և երկար ժամանակ կենդանի պահել «ազգային անկախության կտրիճ ոգին»³:

Նա «Սասնա ծռերի» հիմքում բացահայտում է պատմական երկու կարգի իրողություն՝ Սասնո և մերձակա գավառների նախարարական տների ծագման մասին հնից եկող, առասպելական դրվագներով հատկանշվող տոհմային ավանդությունները (Աբամելիքի և Սանասարի վիպական ճյուղում) և հարավային Հայաստանում ու միջնադարում կատարված պատմական անցուղիների արձագանքները (Դավթի վիպական ճյուղում): Պատմական հնությունը ու բնությունը միմյանցից տարբեր այս զույգ իրողությունների հիմքի վրա ձևավորված վեպում հինն ու նորը ձուլվել են իրար, հերոսների, մասնավորապես Դավթի վեպը կազմվել է միջնադարի Սասունում հերոսացած անձանց արարքներից, կամ էլ «այդ արարքների ազդեցության տակ ժողովուրդը մտցրել է ավելի հին վեպի մեջ յուր նոր ժամանակի հերոսական կռիվները, որ տվել է օտարների դեմ»⁴: Եվ Աբեղյանն իրավամբ հավաստում է, որ մեր հերոսավեպն, անկախ իր միջնադարյան խոր կնիքից, ավելի հին կարող է լինել: Այս հիմունքով էլ նա քննում է հերոսավեպի ծագման հնությունը և գտնում, որ վեպի տարբեր ճյուղերը «միատեսակ հնություն չեն վկայում. Աբամելիքի և Մհերի (Փոքր) ճյուղերն ավելի հին են երևում, այնինչ Դավթի ճյուղը համեմատաբար ավելի նոր»⁵: Նա, ելնելով վեպում հիշատակված պատմական իրողություններից և անուններից, վեպի առաջին, մասամբ և Մհերի ճյուղի հնությունն հասցնում է անգամ մ. թ. ա. VII դ., իբրև արձագանք ուրարտացիների՝ ասորեստանցիների հետ ունեցած հարաբերության: Բայց Աբեղյանը Դավթի ճյուղի մեջ ևս խոր հնության հիշատակներ է տեսնում: «Դավթի վեպի հնության ամենից ավելի գլխավոր ապացույցը հենց այն է, — գրում է նա, — որ նա յուր բոլոր մանրամասնություններով կատարյալ դյուցազներգություն է և ոչ զուտ պատմական վեպ. իսկ յուր կյանքի պատմական շրջանում, միջին դարերում, մեր ազգը չէր կարող ստեղծել դյուցազներգություն, այլ միայն կարող էր հին դյուցազներգությունն ավանդել բերենբե-

³ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Բ, Երևան, 1985, էջ 15:

⁴ Նույն տեղում, էջ 31:

⁵ Նույն տեղում, էջ 32:

րութեան և տալ նորա յոր ժամանակից կյանքի երանգը»⁶։ Այս նույն իրատեսությամբ նա բացահայտում է մեր հերոսավեպում առկա վիպական երկու կարևոր բաղադրիչներ՝ պատմականը և դրամատիկական-առասպելաբանականը, որոնցից վերջինը, վեպի պատմական զարգացման հաջորդականության առումով, նախորդել է առաջինին և իրական կյանքի եղելությունների ազդեցությամբ տակ աստիճանաբար պատմականացել։ Այս հատկանիշի պատճառով էլ Աբեղյանը, ըստ ժամանակի տեղմինաբանության, տալիս է մեր հերոսավեպի ժանրային միանգամայն ճիշտ ըմբռնումը, իբրև «կես-դրամատիկական և կես-պատմական վեպ», որի մեջ դրամատիկականը և պատմական-իրականը խառնվել են իրար հետ, թե շատ հին ժամանակի պատմականը և թե միջնադարյան ժամանակի պատմականը»⁷։

Պատմական ատաղձին զուգահեռ Աբեղյանը քննում է հերոսավեպի, մասնավորապես նրա հերոսներ Աբամելիքի, Սանասարի, Դավթի և Մհերի դրուցադրական-առասպելաբանական հատկանիշները, հավաստում, այսօրվա տեղմինաբանությամբ ասած, Սանասարի և Աբամելիքի կոլտուրական հերոսներ լինելը՝ իբրև կիկլոպյան ամրոցաշինարարների։ Թեպետ նրա ձեռքի տակ առկա վեպի երկու պատումներում գրեթե որոշակի ակնարկ չկար վիպական հերոսների դիցական ծագման մասին, բայց Աբեղյանն իր ներքնատեսությամբ կանխազգուշ էր, որ «թերևս ուրիշ վարիանտներով Աբամելիքն ու Սանասարը սերված լինին մի որևէ աստծուց, կամ իրանց ուժը ստացած լինին գերագույն զորությունից»⁸։ Եվ, արդարև, վեպի հետագայում գրառված պատումներում վկայվեց հերոսների սերումը բնության տարերքից, նրանց ջրային, ծովային ծագումը։ Վեպի ու վիպական մյուս հերոսների առասպելաբանական մոտիվները, հատկանիշներն ու իրողությունները Աբեղյանը հանգամանորեն քննում է հայ ժողովրդի կենդանի հավատալիքների տեսադաշտի վրա և ցույց տալիս, որ վեպի առասպելադրաբանական բաղադրիչները հիմքն ու աղբյուրը եղել են հայ ժողովրդի հին ու նոր հավատալիքները, և վեպը ժողովրդի հոգևոր կյանքի դարավոր պատկերն է իր մեջ անդրադարձնում։ Եվ ոչ միայն այդ, վեպն իր հիմնական գաղափարախոսությամբ, ըստ Աբեղյանի, ևս ժողովրդական-ազնվական է, Դավթի «ժողովրդի գաղափարատիպ է, ժողովրդի ցանկության մարմնացում»⁹։

Վեպի միայն երկու պատումների առկայության և երիտասարդ հեղինակի տեսական պատրաստվածության տվյալ մակարդակի պայմաններում, հարկավ, դեռ շատ բան որոշակի չէր կարելի ասել, բայց ինչ ասել էր Աբեղյանն իր այս անդրանիկ հետազոտության մեջ, ասել էր բավական լուրջ ու հիմնավոր, անգամ այսօրվա բանագիտության համար շատ կողմերով ընդունելի։ «Ազգային վեպով» դրվել էր մեր հերոսավեպի գիտական ուսումնասիրության հիմնահարկը, որի վրա ապագայում Աբեղյանի, մասամբ և ուրիշների կողմից բարձրանալու էր հայ վիպագիտության վերնաշենքը։

Հայ ժողովրդական վեպի այս անդրանիկ հետազոտությանը հաջորդում են վեպի նորագույն պատումների հրատարակություններ, Աբեղյանն իր ուսումնասիրությունն է շարունակում գերմանական ու ֆրանսիական համալսարաններում և տեսական նոր մակարդակով նորովի խորամուխ լինում վեպի հետազոտության մեջ։ 1899-ին հրատարակած «Հայ ժողովրդական հավատքը» և «Հայ ժողովրդական առասպելները» ուսումնասիրությունների մեջ նա մի նոր տեսակետ է զարգացնում վեպի հերոս Սանասարի առասպելական բնույթի վերաբերյալ։ Ելնելով հնդեվրոպական համեմատական առասպելաբանության և հերոսավեպի նոր պատումների տվյալներից, Մ. Աբեղ-

6 Նույն տեղում, էջ 32—33 (այս և հետագա ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

7 Նույն տեղում, էջ 33—34։

8 Նույն տեղում, էջ 36։

9 Նույն տեղում, էջ 43։

յանը հիմնավորում է ծովածին Սանասարի կայծակնային, ամպրոպային հերոս ու վիշապամարտիկ լինելը, վեպի առաջին ճյուղի մեջ բացահայտում հնավանդ առասպելի բազմաթիվ մոտիվներ: Դրանով նա առավել խորացնում և ընդլայնում է հերոսավեպի առասպելարանական հիմքերի հետադոտոլոթյունը:

XX դ. սկզբին հայ բանահավաքների նպատակամիտված ջանքերի շնորհիվ, Հայաստանի տարբեր գավառներից արդեն գրավել ու հրատարակվել էին վեպի և տասներեք նոր պատումներ, որոնք իրենց ընձեռած նոր ու հարուստ տվյալներով պահանջ էին առաջադրում վեպի նոր, առավել ամբողջական ու հիմնավոր հետազոտության համար: Այս անգամ ևս չի հապաղում Արեղյանը: 1906—1908 թթ. «Ազգագրական հանդեսի» տարբեր համարներում՝ իսկ 1908-ին նաև առանձին գրքով, լույս է տեսնում Մ. Արեղյանի «Հայ ժողովրդական վեպը» հետազոտությունը, որը «Սասնա ծռերին» նվիրված մի դասական ու հիմնարար մենագրություն էր: Այստեղ քննված էին «Սասնա ծռերի» բուն էությունը բացահայտող այնպիսի նոր խնդիրներ կամ առաջադրված էին հին հարցադրումների այնպիսի նորոգ մեկնաբանություններ, որոնց մեծ մասը հետագայում արմատացավ հայագիտության մեջ, դառնալով վեպի գիտական ճանաչման տեսական հիմք:

Վեպի 15 պատումների աշխարհագրական տարածվածությունը և վիպասացների սոցիալական կազմը քննելիս, Արեղյանը գալիս է այն համոզման, որ վեպը, ծագելով Սասունում ու Տաթևում, չի սահմանափակվել սոսկ աշխարհագրական այդ շրջաններում, այլ դուրս է եկել իր բնօրրանից, տարածվել մյուս շրջանների հայության մեջ, թողել է իր տեղական բնավորությունը և վերածվել համազգային համաժողովրդական վեպի: Այսպես՝ վեպը պահպանվել ու պատմվում է աշխատավոր չքավոր խավերի միջավայրում, վիպասացները մեծ մասամբ գյուղացիներ են կամ նրանց միջավայրից ելած պանդուխտ արհեստավորներ:

Վեպի ավանդման ու պահպանման այս սոցիալական յուրահատկությունը իր որոշակի վնաս է դրոշմել վեպի բովանդակության և սոցիալական գաղափարախոսության վրա: «Վեպը թեպետ և պատմում է Սասնու տերերի, հայ ազնվականների և իշխանների մասին, — դրում է Արեղյանը, — բայց գրեթե ոչ մի ազնվական բան չունի իր մեջ. այլ ազնվական և թագավոր անվան տակ դուրս են գալիս մեր գյուղացիները: Վեպն ամբողջապես ռամկական, գեղջկական բնավորություն ունի. հայ հասարակ ժողովրդի կյանքն ու հոգին ենք տեսնում այնտեղ, նրա նիստուկացը, պարապմունքը, բարքերը և այլն... Ասացողներն իրենց կյանքն ու հոգին են պատկերացրել վեպի մեջ, և մենք այնտեղ գտնում ենք մեր գյուղացու կյանքի բազմազան կողմերը բավական մանրամասն ու սիրով նկարագրված»¹⁰: Վեպի աշխատավորական, դեմոկրատական ոգու և գաղափարախոսության, ինչպես նաև վիպասացների՝ իրենց ավանդական վեպի վերակերտման հեղինակների, այս հավաստումը նոր խոսք էր մեր բանագիտության մեջ:

Արեղյանը սահմանում է նաև ժողովրդական վեպի ժանրային հատկանիշները: Նախ՝ բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ «Սասնա ծռերն» իր գրառման ժամանակ՝ XIX դ. վերջերին, գտնվում էր արդեն իր անկման ու քայքայման վիճակում և վեպի ծաղկուն ժամանակաշրջանը դնում է միջնադարում, ժամանակի հասարակական մտածողությանն ու հոգեբանությանը՝ համապատասխան: Այսպես՝ ժողովրդական վեպի և հեքիաթի միջև կատարած համեմատություններով բացահայտում է վեպի էական հատկանիշները, նրա ազգային բնույթն ու յուրահատկությունները: Արեղյանը ժողովրդական վեպի գլխավոր հատկանիշը համարում է նրա պատմականությունը, մի տեսակետ, որ պայմանավորված էր ժամանակի ռուս և եվրոպական բանագի-

¹⁰ Մ. Արեղյան, Հայ ժողովրդական վեպը [Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գիրք XIII, Թիֆլիս, 1906, էջ 22, գիրք XIV, Թիֆլիս, 1906, էջ 55]:

տուժյան մեջ ժողովրդական վեպերին տրվող առավել նոր ու ռեալիստական մեկնաբանություններով (Վ. Միլլեր և ուրիշներ)։ Ըստ այդ նոր հայացքի, Աբեղյանը վեպը դիտում է իբրև «պատմական բանաստեղծություն» կամ «բանաստեղծական պատմություն», վեպի ձևավորման մեջ առաջնային, նպատակային տեղ հատկացնում պատմական իրադարձությանն ու անձին։ Այս նոր տեսակետը տրամագծորեն հակառակ էր «Ազգային վեպում» Աբեղյանի պաշտպանած՝ վեպի առասպելադիցաբանական կողմի առաջնության դրույթին։ Ժողովրդական վեպի սկզբնական ելակետը համարելով պատմական իրականությունը, Աբեղյանը, հակառակ «Ազգային վեպում» իր պաշտպանած տեսակետին, վիպական զարգացումը տանում է իրական-պատմականից դեպի առասպելադիցազնականը, այսինքն՝ դեպի իրական եղելությունների, անձանց առասպելադիցազնական աստիճանական գունավորումը։ Այլ կերպ ասած՝ վեպում նախնականը ոչ թե դիցազնական առասպելներն են, որոնք պատմական իրադարձությունների ազդեցության տակ են աստիճանաբար պատմականացել, այլ ընդհակառակը՝ սկզբնականը իրական-պատմական եղելություններն են, որոնք հին առասպելական զրույցների ազդեցությամբ առասպելադիցազնական երանգ են ստացել կամ հարակցվել իրական եղելությունների շուրջ հորինված զրույցներին։

Ժողովրդական վեպը Աբեղյանը դիտում է իբրև վիպական-գեղարվեստական առավել բարդ երևույթ, որի մեջ պատմական և առասպելաբանական բաղադրիչներից զատ առկա են ժողովրդի գեղարվեստական մտքի այլ արժանիքներ էս, որոնք, սակայն, միաձուլ են ու ենթակա վեպի բուն ազգային նկարագրին ու տրամաբանությանը։ Եվ քանի որ վեպի կազմաբանական հիմքը Աբեղյանը համարում էր տվյալ ժողովրդի պատմական կյանքի նշանավոր իրադարձությունները, ուստի գլխավոր շեշտը դնում է վեպի ազգայնության և ժողովրդայնության վրա, դրանք համարելով ժողովրդական վեպի ամենաբնորոշ հատկանիշները, դրանց մեջ տեսնելով նրա մեծագույն արժեքը։ Ժողովրդական վեպը «ազգի դարավոր կյանքի պատկերն է, նրա ձգտումների ու խնդիրների մարմնացումն է. մի խոսքով՝ վեպն ինքը ժողովուրդն է»¹¹։

Վեպի այս նոր ըմբռնումը, եթե մի կողմից արդյունք էր ժամանակի բանագիտության մեջ արմատավորված ժողովրդական վեպերի պատմական մեկնաբանության տեսության, մյուս կողմից, անշուշտ, դարասկզբի հայ ժողովրդի ազգային ինքնությունության գաղափարների և ազատագրական միտումների արձագանքն էր։ «Սասնա ծռերի» պատմական իրականության հետ ունեցած կենսական կապի առաջնահերթ դրսևորումը Աբեղյանը գտնում է վեպում անդրադարձած պատմաաշխարհագրական այն որոշակի տեղավայրերի մեջ, որոնց սահմաններում կատարվում են վեպի գործողությունները։ Վեպում հիշատակվող տեղանունները համադրելով Սասնո և հարակից գավառների համապատասխան անուններին, Աբեղյանը ստույգ որոշում է վիպական գործողությունների աշխարհագրությունը, պարզում, որ թշնամի Մարտերկիրը Ծգիպատոսն է, որի էյության տիրակալ մելիքները XII—XIII դդ. տիրել են Սասունն ու Հայաստանի արևմտյան մասը։ Վեպում հիշատակվող նշանավոր քաղաքների ու պետությունների անունները քննելով Հայաստանի VII—XIII դդ. պատմության տեսագրչության վրա, Աբեղյանը հանգում է վեպի ձևավորման մասին այս պարտոր հետևությունը, որ «վեպն իսկապես յուր հաստատուն կերպարանքը ստացել է մինչև 13-րդ դարու կեսը և այնուհետև խոշոր և էական փոփոխության չի ենթարկվել»¹²։

Վեպի աշխարհագրական անունների քննությունից գնալով դեպի միջնադարյան Հայաստանի պատմությունը, Աբեղյանը վիպական անձանց անունների ու արարքների քննությամբ ավելի է խորամուխ լինում այդ շրջանի

¹¹ ԱԶ, գիրք XIII, էջ 30—32։

¹² ԱԶ, գիրք XV, Թիֆլիս, 1907, էջ 5։

պատմության մեջ, պարզում վեպի իրական պատմական հենքի սկզբնական-տներն ու բուն միջուկը:

Վեպում առկա պատմական ամենավաղ հիշողությունը նա համարում է VII դ. նշանավոր անձանց (Թեոդորոս Ռշտունի և ուրիշներ)՝ Բաղդադի արաբական խալիֆայի տիրապետության շրջանում կատարած արարքների արձագանքները: Իսկ վեպի կենտրոնական հերոսների անուններն ու արարքները կապվում են արդեն հաջորդ հարյուրամյակների պատմությանը, երբ Հայաստանում արաբական զերիշխանությունը տիրապետող ուժ էր դառնում, ծայրաստիճան սահմանափակում տեղական իշխանությունների քաղաքական ու տնտեսական իրավունքները, երբ օտարերկրյա կեղեքումն ու հարստահարությունը, ծանր լուծ դառնալով ժողովրդական զանգվածների ուսերին՝ նրանց մղում են ապստամբական կռիվների:

Նման իրադրություններ է բնորոշվում հատկապես VIII—IX դդ. Հայաստանի, մասնավորապես Տարոնի և Սասունի պատմությունը, որոնց իշխողներ Մամիկոնյանները, ապա և Բագրատունիները զլխավորում են «արաբացիների դեմ ապստամբությունները, որոնց պատճառը լինում են միշտ ծանր հարկերը»:

«Սասնա ծռերի» պատմական միջուկը կամ վիպական խմորման կենտրոնը Աբեղյանը համարում է 851—852 թթ. հարկահանության դեմ ուղղված Սասնո նշանավոր ապստամբությունը, որը ղեկավարում էին Սասնո և Տարոնի իշխան Բագրատ Բագրատունու որդիներ Դավիթն ու Աշոտը և նրա եղբորորդի Հովնանը: Աբեղյանը վիպական Դավիթի, նրա հորեղբայրներ Ջենով Հովհանի և Վերգույի պատմական նախատիպերը գտնում է պատմական հիշյալ անձանց անունների ու արարքների մեջ, իսկ Դավիթի ճյուղի վիպական գլխավոր կոնֆլիկտը, որին նա իրավամբ տալիս է սոցիալական գունավորում՝ կռիվն է հաղահանության համար, որը և 852 թ. ապստամբության բուն շարժառիթն էր: IX դ. Տարոնի և Սասնո պատմական իրադարձությունները համարելով «Սասնա ծռեր» հերոսավեպի էական պատմական միջուկը, Աբեղյանը, սակայն, փաստերի համառ քննություններով ապացուցում է, որ այդ պատմական միջուկը աստիճանաբար կեղևավորվում է հաջորդ դարերի պատմական նշանավոր իրադարձությունների ազդեցության տակ, հասնելով մինչև XIII դ. կեսերը, որից հետո վեպի մեջ, պատմական առումով այլևս նոր փոփոխություններ չեն մտնում: «Սասնա ծռերի» պատմական հիմքերի, վեպի և պատմության հարաբերության խոր ու համոզիչ բացահայտումները դեռևս չեն կանխորոշում վեպի ծագման հնությունը: Աբեղյանը միանգամայն արդարացիորեն հավաստում էր, որ «Սասնա ծռերը» «իր բաղադրիչ տարրերով ու հիմնական ոգով» շատ ավելի հին է, քան IX դարը: Վեպի հնությունն ապացուցելու համար նա բանասիրական մանրակրկիտ քննության է ենթարկում «Սասնա ծռերի» վիպական բաղադրությունն ու խավավորումները և հայոց հին առասպելների ու վեպերի հետ ունեցած նրա ժառանգական աղերսները: Տակավին «Հայ ժողովրդական առասպելներ» (1899) աշխատության մեջ Աբեղյանն ապացուցել էր խորհնացու ավանդած Տիգրանի և Արտաշեսի մասին զրույցների վիպական միասնությունը և այն համարել հայոց առաջին ու հնագույն առասպելարանական վեպը, որ խորհնացին կոչում էր «Վիպասանք» կամ «Ծրագր վիպասանաց»:

Իսկ «Հայ ժողովրդական վեպը» (1908) աշխատության մեջ նա մի նոր հայտնաբերություն է կատարում. հայ հին պատմիչներ Ագաթանգեղոսի, Բուզանդի, խորհնացու, Սեբեոսի երկերում պահպանված հայոց Արշակունի թագավորների և Մամիկոնյան սպարապետների մասին վիպական զրույցները նա համարում է վիպական մի ամբողջություն, վերակազմում նրա մասերն ու միասնությունը, ապացուցում, որ այն եղել է «Վիպասանքից» հետո հայոց երկրորդ ավանդական մեծ վեպը, որի բուն ոգին ու բովանդակությունն են կազմում Արշակունյաց Հայաստանի՝ Սասանյան Պարսկաստանի դեմ մղած

երկարամյա ազատագրական կռիվները: Ելնելով վեպի բուն բովանդակությունից, Մ. Աբեղյանն այն անվանում է «Պարսից պատերազմ»: Այս հին վեպը հետագայում՝ հայոց Արշակունիների անկումից հետո, տեղայնանում է Տարոնում, կապվում Տարոնի և Սասունի Մամիկոնյան իշխանների՝ պարսիկների դեմ մղած տեղական կռիվների հետ և կոչվում նոր անունով՝ «Տարոնի պատերազմ», որ ամբողջությամբ առկա է VIII դ. պատմիչ Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» գրքում:

Աբեղյանն ահա «Սասնա ծռեր» հերոսավեպի վիպական բաղադրիչները համեմատության մեջ դնելով իր իսկ վերակազմած հայոց երեք հին վեպերի՝ «Վիպասանքի», «Պարսից պատերազմի» և «Տարոնի պատերազմի» համապատասխան միջադեպերի և մոտիվների հետ, պարզում է հետևյալը. Սանասարի, Դավթի և Մհերի առասպելապատում դրվագների մեջ առկա են Տիգրանի և Աթահակի, Սաթենիկի, Արգավանի և Արտավազգի հնամենի առասպելները, այն էլ նույն հերթականությամբ, որպիսին վկայված է «Վիպասանքում»: Ապա Սանասարի և եղբոր զրույցը, որի մի բեկորը տակավին արձանագրված էր Աստվածաշնչում, նույնական է «Պարսից պատերազմ» հին վեպի Մամիկ և Կոնակ կամ Դեմետր և Դիսանե եղբայրների զրույցին: Միջնադարյան արաբական ավանդությամբ Սասունի տեր Սանասարի որդին է Մուշը (հին վեպի Մուշեղը), որ սիրահարված է Սալմաստի իշխան Զարվանդի դուստր Տարունին: Տարունի զրույցի մեջ Աբեղյանն իրավամբ տեսնում է հանդուժի ճյուղի մի հնագույն պատում: Հին «Պարսից պատերազմ» վեպի հերոս Մուշեղին «Սասնա ծռերում» փոխարինել է Դավթի: Հին վեպի Շապուհ արքան, Պապ թագավորը, Մշո Մուշեղ իշխանը հետ մղված ձևով հանդես են գալիս նաև «Սասնա ծռերում»: Բազմաթիվ փաստերի զուգադիր համեմատություններից Աբեղյանը դալիս է այն եզրակացության, որ «Սասնա ծռերը» չլուր խոշոր էական գծերով շատ նման է հին վեպին և մասնավորապես Մուշեղի ճյուղին»: Ավելին, այս, իսկ հետագայում առավել մանրամասն Հայ վիպական բանահյուսությունում աշխատության մեջ Աբեղյանը ժառանգափոխակերպումների կապ ու օրինաչափություն է սահմանում «Սասնա ծռերի» և հայոց նախորդ հին վեպերի միջև: Նա ապացուցում է միաժամանակ, որ պատմական դեպքերի ազդեցությամբ հին ազգային «Պարսից պատերազմ» վեպը աստիճանաբար կորցնում է իր համազգային բնույթը, հայոց պատականության անկման հետ նեղանում, տեղայնանում է և կապվում Տարոնի ու Սասունի, նրանց Մամիկոնյան իշխանների արարքների հետ և դառնում «Տարոնի պատերազմ» անունով տեղական վեպ: Մամիկոնյանների թշնամիներն են պարսիկները, որոնց նպատակն է Տարոնի հարկադրումն ու հնազանդեցումը և նրա սրբավայրի՝ ս. Կարապետ վանքի ավերումն ու վանականների սպանությունը: «Տարոնի պատերազմի» վերջին դրվագներում պարսիկներին փոխարինում են նոր թշնամիները՝ արաբները:

Վեպի գործողության հիմնական ոգին ու ուղղությունն է դառնում արաբների դեմ մղած կռիվը: Այնուհետև IX դ. երկրորդ կեսերին Սասունում ու Տարոնում տեղի ունեցած քաղաքական դեպքերի ազդեցության տակ վեպը հիմնովին կերպարանափոխվում է, կապվում Սասնո հետ, դառնում նոր վեպ՝ «Սասնա ծռեր», իսկ հաջորդ դարերի ազդեցությամբ, մինչև XIII դ., զգալի փոփոխություններ ենթարկվելով՝ իր հաստատուն կերպարանքն է ընդունում: Հետևաբար «Սասնա ծռերը» «Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ» հին վեպերի փոխակերպումն է, վեպ, որի մեջ «ապրում են... հին վեպի տարերքն ու ընդհանուր ոգին»:

Հայոց հին ու նոր վեպերի ժառանգական աղբյուրների ու փոխառվածների այս օրինաչափության բացահայտումը գիտական խոշոր ներդրում էր հայ բանագիտության մեջ և կազմում է Աբեղյանի՝ հայ վիպական բանահյուսության պատմատիպաբանական զարգացման տեսության անկյունաքարը:

Աբեղյանը նոր մոտեցումով ու հայեցակետով մանրակրկիտ հետազոտության է ենթարկում նաև «Սասնա ծռեր» հերոսավեպի առասպելաբանական

հատկանիշներն ու կրոնաբարոյական գաղափարախոսությունը: Հավատարիմ վեպի պատմական մեկնաբանման իր դավանած սկզբունքին, նա վեպում առկա հնագույն առասպելները վեպի էական սաղմն ու միջուկը չի համարում, այլ նրա մեջ մտած եկամուտ տարրեր, որոնք հարակցվելով վիպական սյուժեներին, ենթարկվել են համապատասխան փոխաձևումների, հին հեթանոսական և նոր քրիստոնեական հավատալիքների փոխադարձաբար հաշտեցման ու համադրման հիմքի վրա:

Արեղյանը 1930-ական թվականներին հայ ժողովրդական վեպերին, առասպելներին, հավատալիքներին նվիրված իր նախորդ ուսումնասիրություններին հիման վրա գրում է «Հայ վիպական բանահյուսություն» ընդհանրացնող աշխատությունը, ուր հայ բազմադարյան վիպական բանահյուսության արդյունքները համակարգված ու քննված էին իրենց պատմատիպաբանական զարգացման ու փոխաձևումների ընթացքում: Հայ վիպական բանահյուսությունը նա բաժանել էր պատմական հին դարերի, որոնցից վերջինում ընդգրկված էին «Սասնա ծռեր» հերոսավեպն ու վիպական երգերը: Այստեղ նա «Սասնա ծռեր» բաժնում քննության է առնում վեպի գեղարվեստական հատկանիշները (վիպական անձի պատմական դերի չափազանցում, իդեալականացում, վիպական գործողություններում մարտի, հերոսի ամուսնության, մահվան վրեժխնդրության սյուժեների առատություն, գործողության դինամիկ զարգացում, վիպական լարվածություն, դիպուկ տրամախոսությունների, պատկերավոր նկարագրությունների առատություն և այլն):

«Սասնա ծռեր» հերոսավեպի 1000-ամյակի տոնակատարության օրերին՝ 1939 թ., Ս. Արեղյանը գրում և տպագրում է հերոսավեպին նվիրված իր վերջին ուսումնասիրությունը՝ «Մատենագիտություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին» խորագրով, ուր համակարգված ու քննական հայացքով շարադրված էր հերոսավեպի գրառման, հրատարակման և ուսումնասիրության պատմությունը, սկսած 1873 թ. մինչև այդ օրերը:

Հերոսավեպի նկատմամբ Արեղյանի ստեղծած գիտական վաստակը, սակայն, սոսկ վերը շարադրվածով չի սահմանափակվում: 1930-ական թվականների սկզբներին, Հայաստանի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Ա. Խանջյանի ցանկությամբ և բանաստեղծ Ն. Չարենցի առաջարկությամբ Ս. Արեղյանը նշանավոր բանագետ Կ. Մելիք-Օհանջանյանի հետ ձեռնամուխ է լինում «Սասնա ծռեր» հերոսավեպի՝ մինչ այդ գրառված պատումների գիտական հրատարակությանը: Երկու բարեկամների անխոց ջանքերի շնորհիվ, 1936 թ. լույս է տեսնում այդ հրատարակության առաջին մեծածավալ հատորը, իսկ հաջորդ հատորի երկու մասերն առանձին գրքերով լույս են տեսնում Ս. Արեղյանի մահվանից հետո՝ 1944 և 1951 թթ.: Այս հրատարակությունն օժտված էր Ս. Արեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի գրած ընդարձակ ներածությամբ, համապատասխան առաջաբաններով, հարուստ ու արժեքավոր ծանոթագրություններով, բառարանով ու ցանկերով: Այն առհասարակ հայ բանահյուսական հուշարձանների գիտական անդրանիկ հրատարակությունն էր, դասական մի գործ, որ ցարդ մնում է «Սասնա ծռեր» հերոսավեպի չգերազանցված հանրագիտարանը:

1938—1939 թթ. Արեղյանը գործունե մասնակցություն է ունենում «Սասնա ծռեր» հերոսավեպի 1000-ամյա հոբելյանի տոնակատարությանը: Հոբելյանական կոմիտեի առաջին իսկ նիստում՝ Ս. Արեղյանի առաջարկությամբ, որոշվում է հերոսավեպի բոլոր պատումների հիման վրա կազմել վեպի մեկ միասնական բնագիր, այն հրատարակել հայերեն և ռուսերեն լեզուներով: Ստեղծվում է բնագիրը կազմող հանձնաժողով, որի մեջ են մտնում Ս. Արեղյանը, Գ. Աբովը և Ա. Ղանալանյանը: Արեղյանը կազմում է վեպի առաջին յուզլի՝ «Սասնաբերի և Բաղդասարի» բնագիրը, իսկ մնացած ճյուղերին՝ Գ. Աբովը և Ա. Ղանալանյանը: 1939-ին լույս է տեսնում վեպի այդ նորակազմ համահավաքը՝ «Սասունցի Դավիթ» խորագրով, որը ան-

միջապես թարգմանվում է ռուսերեն, հետագայում նաև աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներով:

Այդպես, իր շուրջ վաթսուներեք հիտական մեծարդյուն գործունեության ընթացքում Աբեղյանը միշտ իր տեսադաշտում է պահում «Սասնա ծռեր» հերոսավեպը: Իր գիտական գործունեությունը սկսելով հերոսավեպի նոր պատումի գրումամբ և ուսումնասիրությամբ, նա այնուհետև, միջազգային բանագիտության նոր պահանջների համեմատ, նորանոր հետազոտություններով աստիճանաբար ստեղծում է «Սասնա ծռեր» հերոսավեպի և առհասարակ հայ վիպական բանահյուսության հիմնարար տեսությունը, որը նրա հալոց լեզվի, հայ հին գրականության, տաղաչափության, քնարական բանահյուսության գիտական մանրակրկիտ խորությամբ մշակված ուսմունքներին հավասար միշտ մնալու է որպես հայագիտության անանց արժեքներից մեկը:

МАНУК АБЕГЯН И ГЕРОИЧЕСКИЙ ЭПОС «САСНА ЦРЕР»

(К 125-летию со дня рождения ученого)

С. Б. АРУТЮНЯН

Р е з ю м е

Одним из выдающихся научных достижений представителя классической арменистики М. Абега является его основополагающее учение об армянском эпосе.

Начиная с 1880-х годов эпос «Сасна црер» стал центром научных интересов М. Абега. Он посвятил армянскому эпосу ряд монографических исследований («Национальный эпос» — 1889 г., «Армянский народный эпос» — 1908 г., «Армянская эпическая словесность» — 1930-ые годы и др.), создав тем самым свое классическое учение о нем. М. Абега является также составителем научного издания вариантов эпоса «Саона црер» в 3-х объемистых книгах (в сотрудничестве с проф. К. Мелик-Оганджяном) и одним из авторов сводного о тексте эпоса «Давид Сасунский» (1939 г.).